ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 5

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . . 4 րբ. 50 կ
Թուրքիա . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . . 2 տօլար 50ս.

Յայտարարութիւնների վճարը՝
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Չորրորդ « » 3 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏՔ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրել պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք „ւ"-ի և „վ"-ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու—ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի իսկական անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատւութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի։

№ 5 | 1912 Թ. | ՇԱԲԱԹ 17 ՄԱՐՏԻ | 1912 Թ. | № 5

ԱՐՏԻՍՏԿԱ ՕՐԻՈՐԴ
M-elle Karally De Gabby

Ցանկանում է որդեգրել և իր մօտ պահել 3—6 տարեկան մի հայ աղջիկ, որի համար Փարիզ մագազինից գնել է արդէն մանկական 3 ձեռք ընտիր զգեստներ։ Իր աղջկան որդեգրել տալ կամեցողը թող դիմի Փարիզ մագազինի տէր

պ. Յ. Տէր Թովմասեանին

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿՈՒՄ

Խառն է ամբողջ աշխարհը թէ արեւելեան և թէ արեւմտեան կիսագնդերում։

Արեւմուտքում Մեքսիկայի անկախութիւնը վտանգուելու վրայ է։ Միացեալ նահանգները բոլշեր են հաշւում կլանելու այդ երկիրը։ Հարաւային Ամերիկայում քաղաքական փոթորիկները պակաս չեն։

Արեւելքում՝ արեւմտեան եւրոպայում Փորթուգալիան Անգլիայի և Գերմանիայի կողմից ազրեսսիւ շարժման երկիւղ է կրում։ Սպանիան և Ֆրանսիան Մարոկեան խնդրով վարում են դիւանագիտական երկար ու անբաւարարելի բանակցութիւններ։

Աւստրիան վախենալով Բալկաններում երբևէ բարդութիւնից, տենդային արագութեամբ զօրքեր է կեդրոնացնում Սերբիայի սահմաններում։ Բոլգարիան, ռազմական այդ փոքրիկ, բայց սպառնալից երկիրը եռանդուն զօրաժողով է անում։

Հանգիստ չեն Բալկանեան մանր ազգերը։ Զգացւում են այդ տեղերում քաղաքական հրաբղխային խուլ որոտումներ։

Դիակովոյում Ալբանները թշնամական խիստ մեծ ցոյց են արել Օսմանեան ներքին գործերի մինիստր Հաճի-Ադիլ-Բէյին։

Կաթոլիկ և Մահմեդական Ալբանները դաշն են կնքել կռուելու ընդդէմ Տաճիկների։ Մակեդոնական չէտաները սկսել են արդէն յարձակողական շարժումներ։ Առ հասարակ Բալկանները ներշնչում են լուրջ երկիւղներ և անցանկալի գուշակութիւններ անել տալիս դիպլոմատներին, որոնք Ապրիլին սպասում են քաղաքական խոշոր դէպքեր այդ մարզերում։

Ծովերի թագուհի Անգլիան ծանր մտատանջութեան մէջ է վտանգաւոր հարեան և սպառնալից մրցակից Գերմանիոյ օր աւուր աճող զօրութեան պատճառով, ուստի և փոխադարձաբար իբար շոյում են փոփոխակի նենգ բանակցութիւններով։

Այս տողերում մենք դիտէինք խօսում այն աչքի գործադուլների մասին, որը հսկայական չափերի են հասել երկու կիսագնդերում։

Ռուսաստանը իւր ներքին խոշոր ու սպառնալից հարցերից բացի կանգնած է Հեռաւոր և Մերձաւոր արեւելքի աւելի քան խոշոր անակնկալների առաջ։

Առաւել անհանգիստ է Ռուսաստանը Տաճկաստանի կողմից։ Իտալացոց վճռական քայլերը Տրիպոլսում և Տաճկական քաղաքական գործերի կրիզիսը ընդհ. երկրում այն աստիճան սուր կերպարանք են ստացել, որ Սուլթանն ըստիպուել է հրաժարական տալ և հազիւ հազ յետ են կանգնեցրել նորան։

Անկարող լինելով հեռաւոր տարածութեան վրայ գործել Իտալացոց դէմ, միւս կողմից գտնուելով Իտալական նաւատորմի Փոքր-Ասիական ափերը և Դարդանելը ռմբակոծելու երկիւղի տակ, Տաճիկները որոշում են պատերազմի դաշտը փոխադրել արեւելք, ընդդէմ Ռուսների, ենթադրելով, որ Ռուսաստանը բաւական խճճուած կլինի Չինական գործերով։

Արեւմտքում կորցրածը կամ կորցնելիքը նորա յոյս ունեն փոխարինել արեւելքում։ Այս պատճառով ամեն օր նորա բազմապատկում են իրենց զօրքերը Ուրմիոյ. Խոյի շրջանում, Կարսի և Իգդիրի կողմերում և երազում են փայլուն յաղթանակներ և «անարգել» արշաւանքներ մինչև Երեւան ու մինչև Թիֆլիզ։

Ռուսական բոլոր թերթերը, առաւելապէս Նովօյէ—Վրեմեան, այդ առթիւ հնչում են ալա՜րմ և մատնանշում են այն «կերոնները», որոնք սպառնում են նորանց նորանոր հրդեհներով Արեւելքում։

Իրաւացի և տեղին է Ռուս թերթերի բարձրացրած աղաղակը, որովհետև բորբոքուած Տաճիկներին կարող են օգնել, ինչպէս իրենք նկատում են, Պարսկաստանի և Կովկասի մահմէդական տարրերը որոնք յամենայն դէպս Ռուսներին սիրող և բարեկամ չեն և լռել են առ ահի։

Որքան և անցանկալի, այնու ամենայնիւ մթնոլորտը ելեքտրականացած է հաւանական պատերազմի երկիւղով։ Մենք ի բոլոր սրտէ կցանկանայինք չլինէր այդ պատերազմը. տեղի չունենար 10-եակ հազարաւոր կեանքերի անտեղի և անփոխարինելի կորուստը։

Առաւելապէս պատերազմի պէտք չունի Տաճկաստանը, որ տառապում է ֆինանսականի չգոյութիւնից։ Նա նոր հողերի պէտք չունի. եթէ եղածի կէսն էլ նա պահի և պահի մարդավայել, բարեկարգ և անդորր վիճակում, ամենամեծ բարիքը արած կլինի այն ժողովուրդներին, որոնք դարեր շարունակ աւեր, թալան ու սարսափ են միայն տեսել և կարօտ մնացել տիրողի քաղցր ժպիտին կամ հայրական խնամքին։

Իսկ եթէ հին Բիւզանդիոնի նոր քաղաքագէտները վստահ իրենց տակուն բանակի վրայ՝ վճռել են անպայման պատերազմել, ապա նրանք չմոռանան, որ գործ ունին այն հսկայ Ռուսաստանի հետ, որ յաճախ իբրև յաղթական՝ իրենց հաշտութեան պայմաններ է թելադրել։ Թող կիսալուսինը յիշի Սան-Ստեֆանօն և... քանի ուշ չէ, խելաւախոհութեամբ կարգադրէ հզօր հարեանի հետ այն բոլորը, որ անտեղիօրէն վճռել է ուզում սրով ու թնդանօթով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թաւրիզի մօտ 200 մեր բաժանորդներից շատերը, որոնց մօտ ուղարկել և բաժնեգին ենք խնդրել, պատասխանել են. «թող դեռ 5 6 համար դուրս գայ տեսնենք՝ յետոյ»։ Եւ այս ասողները նըրանք են, որոնց համար ոչ միայն 14 ղրանը, այլ 10 անգամ 114 թումանը ոչ մի նշանակութիւն չունի։ Պէտք է գիտենալ. որ մենք կանխիկ ենք վճարում թղթի, գրաշարի, տպարանի, փոստի ցրիչի և այլնի համար. իւրաքանչիւր համարը մեզ վրայ նստում է 14 թումանից աւելի։ Հասկանալի է, ուրեմն, որ մեր յարգոյ բաժանորդներն էլ կանխիկ վըճարմամբ, այլ եւ առանց յետաձգելու, պէտք է մեզ հնար տան՝ անսաթայք թերթի հրատարակութիւնը շարունակելու։ Հէնց առևտրական ասպարիզում չէ որ առանց վճարելու, ոչ ոք ոչինչ չի առնում և չի կարող առնել։ Խնդրւում է առանց մեր գանձողին սպասելու էլ՝ իրենք ղրկեն մեզ դրամները։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԾՈՒՐՁԸ

—

Էքս Շահը Օդեսայում

Մարտ 3-ի առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա է հասնում Էքս Շահ Մահմեդ Ալին։

Բայց ահա՛ թէ ինչպէս։

Ըստ կարգադրութեան, ի պատիւ Նախկին Շահի, դիմաւորելու համար Օդեսայի գլխաւոր կայարանում մեծ պատրաստութիւն էին տեսել։ Գնացքը կանգնելուն պէս բացւում են կայարանի արքայական սենեակների դռները և դուրս են գալիս պլատֆօրմը քաղաքի մեծամեծները ու իշխանները։ Բայց ի զարմանս բոլորի երկու սալօն—վագոնների մէջ չի երեւում ոչ ինքը Շահը և ոչ նորա շքախումբը։ Յետոյ միայն պարզւում է, որ Պարսկաստանի Նախկին տէրը խուսափելով փառահեղ դիմաւորութիւններից, աւելի խոհեմութիւն է համարում Օդեսայից մի կայարան այս կողմը իջնել և իրեն սպասող մի ինչ որ ռօտմիստր Խարաեւի հետ աւտօմօբիլով գնալ դէպի պալատ։

Մահմեդ-Ալուն տեսնողները պատմում են, որ բաւականին գունատուել ու նիհարել էր և առ այժմ տրամադրութիւն է յայտնել ոչ ոքի չընդունել։

Էքս Շահի համար այժմ փնտրում են մի աւելի ընդարձակ բնակարան, որովհետև ներկայ պալատը, որտեղ ապրում է Մահմեդ Ալու ընտանիքը, բաւականին նեղ է և անյարմար։

Էքս Շահին ուղեկցելիս են եղել Աստրախանից մինչև Օդեսա երկու ռուս Կովկասցի սպաներ և ութ կօզակներ։

«Բ. Շ...»-ից.

—

Պարսից արտաքին գործերի մինիստր Վըսուղ-էդ-Դովլէն հրաժարական է տըւել։ Սպասւում է ամբողջ կաբինէտի հրաժարականը։

—

Թերթերում կարդում ենք, որ Եփրեմի զօրքը ցրիւ է եկել։

—

Մահէդ Ալի Շահը հեռացաւ Պարսկաստանից և Պետրովսկի վրայով անցաւ Բագու, Օդեսա գնալու համար։ Էքս Շահը պիտի ստանայ Պարսից կառավարութիւնից տարեկան 75000 թուման ռոճիկ։ Պարսից կառավարութիւնը չէր ուզում 50000 թումանից աւելի վճարել, Մահէդ Ալին էլ 20 միլիոն վնաս էր պահանջում։ Երկար սակարկութիւնից յետոյ կտրեցին 75 հազար թուման։ Մահէդ Ալի Շահը Օդեսայից պիտի տեղափոխուի Անգլիա՝ այնտեղ ապրելու համար։

—

Սալար-էդ-Դովլէն, Շահի եղբայրը, մի սաստիկ կռուից յետոյ, յաղթեց կառավարական զօրքին և տիրեց Քիրմանշահը։ Սալարի զօրքը թալանեց քաղաքը։ Անգլիական և Ռուսական կառավարութիւնները բանակցութեան մէջ են Սալար-Դովլի հետ, որ նա էլ, իւր եղբօր նման, սատանայ տարեկան 75 հազար թուման ասճիկ և հեռանայ Պարսկաստանից։

—

Թուրք Պարսկական սահմանի վէճը կարգաւորելու համար չորս պարսիկ կոմիսիոներներ գնացել են Կ. Պոլիս Պարսից կառավարութեան կողմից։ Ներկայ պիտի լինեն ժողովում նաև Թաւրիզի Անգլիական հիւպատոս՝ պ. Շիփլին, և Ռուսաց դեսպանատան կողմից՝ պ. Մինորսկին։

—

Աարպատականի մաքսատների ընդհանուր տեսուչ պ. Ալէքսանդր Քինէն գնացել է Եւրոպա արձակուրդով։

—

Նէջէֆի և Քերբելայի Մուշտէիդները և Ուլեմաները մի ֆէթվա են ուղարկել Թուրքիոյ, Պարսկաստանի և Հընդկաստանի Մահմմէդականներին, որի մէջ այսպէս են գրում,— «Քանի որ եւրոպական պետութիւնները ամեն կողմից հարուածում են Իսլամ երկիրները—Իտալան՝ Տրիպոլիսը, Ռուսիան՝ Պարսկաստանի Հիւսիսը և Անգլիան՝ Հարաւը—այդ պատճառով ամեն մի հաւատացեալ մուսուլմանի պարտաւորութիւն է պատրաստուել և արտաքսել այդ անհաւատներին Իսլամ հողերից, չխնայելով ոչ փող և ոչ արիւն, որպէս զի Իսլամը պահէ իւր անկախութիւնը և չընկնէ Խաչի Իշխանութեան տակ [1])։

Թիւ Զիլհեջջա 5-ին, 1329

Այս ֆեհաթի կոչը ստորագրել են Մահմմէդ Քեազիմ Խօրասանին, Մահմմէդ Քեազիմ Թէաբաթէաբային, Աբդուլլահ Մազանդարանին, Իսմայիլ Սատրէդին Իսֆահանին և ուրիշները։

ՄԵՉՆԻԿՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ.

—

Ֆրանսիական «Monde Illustré» կոչուած հանդէսը մի դասական հետազօտութիւն (enquête) է սկսել պատերազմի վերաբերեալ։ Այս նպատակով լիշեալ հանդէսի խմբագրութիւնը դիմումներ է արել բազմաթիւ ականաւոր անձնաւորութիւնների, որոնցից մէկն է և Ի. Ի. Մեչնիկովը, որ իւր պատերազմի նկատմամբ կազմած կարծիքն այսպէս է ձևակերպել։ Ես կուսակից եմ խստագոյն և անողոքելի պատերազմի... ընդդէմ վնասակար միկրոբների։ Որքան որ մենք յաղթութիւններ տանենք նրանց վրայ, մարդկային ազգի կեանքի արժանաւորութիւնները կսկսեն աւելի բարձրանալ և գնահատուել։ Դէպի մարդկային կեանքը այլևս թեթևօրէն չեն վերաբերուիլ։ Մարդուս վրայ կազմած այն գաղափարը, որ իբր թէ մարդս մի, եթէ այսպէս կարելի է ասել, «թնդանօթային մկանունք» է, վերջնական կերպով կընկնի մարդկութեան հին սարսափների շարքերի մէջ, ինչպէս, օրինակ, արեան վրիժառութիւնը, որը ներկայումս, իհարկէ, ոչ ոք չէ համարում արդարադատութիւն։ Ես ամրապէս հաւատում եմ, որ ապագայում, դուցէ հեռաւոր ապագայում, պատերազմը կը վերանայ։

Թարգ. „P. C.“

Լ. Գէորգեան

[1]) Դա վերջին խելագարութիւնն է, որ անում են դարն ապրած Ուլեմաները ի կործանումն իրենց մահմեդական երկրների։

Ծ. Խ.

ԴԱՐԳԵԱԼ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

—

«Ցանցնաժողովի բոլոր անդամները, նրանց թւում եւ «Դաշնակցութեան» ներկայացուցիչը եկան այն համոզման, որ Սպ. Սպանդարեանը զոհ է ճակատագրական սխալի»։

„Վարանդեանը (Դաշնակցութեան ներկայացուցիչը) լսում է յանդիմանութիւն „թուլութեան“ համար»։

ՊՐՕՏՕԿՕԼԻՑ (յաւել. եր. 11—12).

—

Նորերս ձեռքս ընկաւ «Դրօշակի» վերջին համարը (1912 թ. № 1), որ, գրեթէ, ամբողջապէս նուիրուած է «Նոր-Դարի» խմբագիր Սպանդար Սպանդարեանի յայտնի գործին։

Ամբողջապէս եմ ասում, որովհետև թէև յիշեալ համարի մէջ կան միքանի՝ շաբլօնական տօնով ու ոճով գրուած յօդուածներ ևս, բայց թերթի four եւ երկու երեսը, երկու սիւնեակ իւրաքանչիւր երեսում, իւրաքանչիւր սիւնեակում մօտ 70 մանրագիր – 8-ի շրիֆտով տող,—նուիրուած է վերոյիշեալ չարաբաստիկ «գատին»։

Պէտք է նկատենք նոյնպէս, որ Սպանդարեանի «գատին» վերաբերեալ նիւթը տպուած է առանձին յաւելուածով, թէև աւելի ճիշտ կը լինէր թերթը Սպանդարեանի գործի յաւելուածը համարել՝ այնքան առաջինը նոր է երկրորդի առաջ թէ նիւթի և թէ մանաւանդ «ելեզաֆոխական» կրակի կորովի կողմից։

Այս ձևական, բայց անհրաժեշտ դիտողութիւնները անելուց յետոյ անցնենք «Դրօշակ» Սպանդարեանի այդ մեծածաւալ յաւելուածի նիւթին—բովանդակութեան։

Ընթերցողը պարզ գաղափար կազմելու համար այն շարժառիթների մասին, որոնք թելադրել են «Դրօշակի» խմբագրութեան հրատարակել 44 սիւնեակ գործ, գրեթէ 100—120 երեսնոց մի ամբողջ գիրք, պէտք է ուշի ուշով կարդայ մեր յօդուածի գլխին գրուած այն երկու ցիտատները, որ մենք հանել ենք հէնց Դաշնակցութեան պաշտօնական օրգանում տպուած Սպանդարեանի-Դրօշակի գատավարութեան արձանագրութեան—պրօտոկոլից։ (Երես 11, սիւնեակ 2-րդ, տող 16—19 և երես 12, սիւնեակ 1-ին տող 4—5).

Այդ վերը յիշուած երկու նախադասութիւնները—գաղափարները Սպանդարեանի գործի հասկանալու բանալիներն են։

Սպանդարեանի գործը մի խարտոնակ կրակ էր «Դրօշակի» խմբագրութեան համար, որ առանձին յաւակնութեամբ՝ թեթև սրտով հրապարակ ձգաւ իբր թէ հայ իրականութիւնը մաքրելու, մտանալով որ Դավոները և այլք, որոնց անունները իրենց աւելի լաւ յայտնի են, յամենայն դէպս իրենց շարքերում պէտք է որոնել։

Առաջին փորձը՝ մրոտել հայ մտաւորականութիւնը, նրա գաղափարական ներկայացուցիչներին՝ յանձին Սպանդար Սպանդարեանի այնպիսի ֆիասկո կրեց, որից այժմ աշխատում են մի կերպ դուրս գալ «Դրօշակի» թեթև ամիտ ղեկավարները։

Այդ հրատարակած մեծածաւալ գործը առաջին փորձն է, եթէ ոչ ինքնարդարացման, գոնէ մեղմացուցիչ հանգամանքներ ճառելու համար։

Սպանդարեանի արդարացումը շշմեցուցիչ տպաւորութիւն է թողել դաշնակցական շրջաններում, ինչպէս վկայում է տուած պրօտոկոլը և պ. Վարանդեանը «յանիդմանութիւն» է լսում ընկերներից իբր «թուլութեան» համար, որ նա անկարող է եղել գործին հարկաւոր ընթացք տալ, որ նոյնիսկ ինքը համոզուել է Սպանդարեանի անմեղութեան մէջ և այդպիսով խլտառակել կուսակցութեանը։

Տպաւորութիւնը մի փոքր թուլացնելու համար Վարանդեանը—որ միաժամանակ «Դրօշակի» խմբագիրն է—տպագրելով Սպանդարեանի գործի արձանագրութիւնը, կցել է նրան ներածութիւն, յայտնի ոճով ու բովանդակութեամբ, ուր խրոխտում է, թէ Դաշնակցութիւնը այն միակ կուսակցութիւնն է, որ իր շարքերում չի ունեցել—«agent—provocateur» (այս բնագրի խօսքն է). Մոռանալով, որ ամեն մի հալ, փոքր ի շատէ ծանօթ մեր իրականութեան հետ՝ պէտք է կուշտ ծիծաղի այսպիսի խօսքեր լսելիս այնպիսի բերանից, որտեղից այդ չպէտք է լսուէր, որովհետև եթէ ներկայ հայ կեանքում եղել են պրովոկատորներ—ապա միայն հէնց այդ շարքերում։

Արդ՝ ճշմարտութեան միանգամայն հակառակ ներածութիւնից յետոյ սկսում է պրօտոկոլը։ Բայց երես չես անցնում, տող չես կարդում, որի տակը ծանօթութիւն չլինի դրուած խմբագրութեան կողմից, նոյն Վարանդեանի կողմից, որի ասելիքը մտած է ամբողջապէս արձանագրութեան մէջ։

Անթիւ ու անհամար նօտրագիր խառնած ծանօթութիւնների մէջ՝ յայտնի կուսակցութեան ներկայացուցիչը փորձում է թուլացնել իր ասածների ոյժը մի կողմից, միւս կողմից աւելորդ բացատրութիւններով, անվայել ակնարկով մի կերպ ստուեր ձգել, նսեմացնել պրօտոկոլի իրեն համար չախչախիչ եզրակացութեան վրայ։

Պրօտոկոլի վերջը կցուած է պ. Վարանդեանի ճառի միայն մի մասը, մի որոշ հատուածը, որ պէտք է ամբողջութեամբ առաջ բերուած լինէր, շատ հասկանալի պատճառով։

Այսպէս արձանագրութեան—պրօտոկոլի սկզբում և վերջում դնելով իրենց խօսքերն ու ճառերը, պրօտոկոլի ամեն մի խօսքի տակ դնելով ծանօթութիւններ, նորից փորձել են մթագնել, խճճել գործը, սակայն այդ աշխատանքը արժէք չունի գիտակից ընթերցողի համար, որին միայն հարկաւոր է միջկուսակցական դատարանի վճիռը։

Այդ դատավճիռը[1]) յայտնի է ընթերցողին. նրա մասին կրկին խօսելն աւելորդ կը լինէր, բայց այդ դատավճիռից շատ աւելի ուժեղ ու չախչախիչ տպաւորութիւն է գործում արձանագրութիւնը։ Միթիանկեալ ասենք, որ այդ պրօտոկոլը ռուսերէն է պահուել, որովհետև դատաւորները ռուսներ են եղել և «Դրօշակ»-ում տպագրուած է թարգմանութիւնը, որ այնքան էլ լաւ չէ կատարած և տեղ տեղ ակներև է անշնորհք թարգմանութիւնից առաջ եկած մաքի թուլութիւնը։

«Դրօշակ» Սպանդարեանի գատավարութեան հէնց առաջին ֆազից—ինչպէս ցոյց է տալիս պրօտոկոլը, զրպարտիչ կողմը բռնել է ոչ թէ մեղադրական գիրք յարձակողական պոզիցիա, այլ պաշտպանողական, մեղմացուցիչ հանգամանքներ ճառողի դեր ստանձնել։ Որո՞նք են այդ մեղմացուցիչ հանգամանքները։

Երբ գործի հէնց առաջին օրից երևան է գալիս Սպանդարեանի անմեղութիւնը, ճակատագրական սխալը, ինչպէս սիրում են արտայայտուել, «Դրօշակը» կաշուից դուրս է գալիս ապացուցելու, որ ինքը չարամտութեամբ չէ ընտրել այդ ագեղ դերը, որ նա միանգամայն անկեղծ է եղել իր «սխալանքների» մէջ։

Այդ միակ խնդիրը, գոնէ չարամտութեան «վատ դիտաւորութեան» բացակայութիւնը—իբրև մեղմացուցիչ հանգամանք Սպանդարեանի դէմ շարուած պատմական դատն ամբաստանութեան՝ հեղինակներին յաջողւում է կորզել։

Չպէտքէ մի բոպէ անգամ աչքաթող անել այն հանգամանքը, որ դատարանի կազմը աննպաստ էր Սպանդարեանի համար, որովհետև կազմուած լինելով զուտ յեղափոխական տարրերից, որքան էլ նա արդարասէր լինէր, այնուամենայնիւ չէր զլանալ գոնէ մեղմացուցիչ հանգամանքներ ընդունել մի յեղափոխական ընկերակից օրգանի վերաբերմամբ։

Եւ Սպանդարեանի յաղթանակի մեծութիւնը հէնց նրանումն է, որ նա այդպիսի դատարանի առաջ՝ դաղափարով իրան արամագծօրէն հակառակ, իրան թշնամի դատաւորների առաջ տարաւ միաձայն յաղթանակը։

Պրօտոկոլի հրատարակութիւնը նոր, շատ աւելի մեծ լոյս է սփռում Ս. Սպանդարեանի գործի վրայ, քան արել էր լոկական դատավճիռը։

Այսպէս վերջացաւ Սպանդարեանի գործը, պրօտոկոլն էլ հրապարակի վրայ է, «Դրօշակն» ասաց իր խօսքը, բայց երբ պէտք է միջոց տրուի Սպանդարեանին ասել իրանը, երբ պէտք է նա էլ ասի իր ասելիքը։

18 փետր, 1912 թ. Ն. Բ.
Բերլին.

«Հովիտ» № 9

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՈՒԻԼԵԶՄ ՇԷՅՔՍՊԻՐ[1])

1564 – 1616

Նա փրկել էր իւր հօրը ազքատութեան ճիրաններից, ամենագեղեցիկ տունը Սթրաթֆորտում նրան էր պատկանում, շատ հող էր գնել և ամենահարուստ ու բարեկեցիկ էր դարձել։ Բայց որքան վազանցուկ է աշխարհի փառքը, ինչպէս շուտ է չքանում ամեն բան այս կեանքում։ Պէտք էր որ Շէյքսպիրն էլ անձամբ փորձառու լիներ այդ անողոք իրականութեան։ Վասն զի շատ չքաշեց և ահա նրա կեանքի ամբողջ հորիզոնը սևանալ սկսեց։ Նրա մեծագոյն և ամենալաւ բարեկամները կործանուեցին մին միւսի յետևից։ Այսպէս Էսէքսի Դուքսը կախաղան բարձրացաւ, Լօրտ Սաութհամբթրն Աշտարակում բանդարկուեց և Լօրտ Պեմպրոկը արքունիկից աքսորուեցաւ։ Եթէ նրա երևակայական սօնատներից եզրակացնել ներելի է, աւելացնենք այդ բոլորին նաև այն հանգամանքը, որ նա լիմարաբար սիրել էր և մի մտերիմ բարեկամի և շնորհիւ իւր սիրոյն յուսախաբուել, այն ատեն մենք կունենանք նրա թշուառութեան մի լիակատար պատկերը։ Հասարակական և անձնական ազէտը նրան ճնշում էր դառնօրէն, թւում է որ նա մինչև իսկ իւր դերասանական կոչումից էլ զզուել էր և հոդեկան խաւարին մէջ, [թէև դեռ թատրոնի գործն կպած էր մնում նա) դժբախտ բանաս-

[1]) Տես «Միտք» № 4

---

[1]) Կհրատարակենք յաջորդ թուերում և կտանք առհասարակ՝ նախ ահաբեկուած և ապա յաղթական դուրս եկած Սպանդարեանի գործի էվոլիւցիան և արևել. բիւրոյի ինֆինայտսան եւ յանձնապասան թուղթերը, որը ամեն կասկածից դուրս էր համարում պրովոկատորութիւնը Սպանդարեանի, «Լեզէոններ» համարում Սպանդարեաններին և երևակայական «հայ չարիաթֆիներ» կնքում հայ ազնիւ մտաւորականութիւնը, որոնց հակատին թուղթիկում Ցազկերտական գռոզութեամբ կպցրել են այս՝ թեթև սրտով ասուած ածականները. «նախկին լիբերալ ընենգադներ, աղա—բուրժուաներ, տիրացուատիպ դրրողներ ու հրապարակախօսներ... որոնք չարունակում են հարստահարել հայ ժողովրդի համբերութիւնը...» (!!!) Ծ. Խ.

տեղծը զաւէշտներ՝ գրելով անցաւ կեանքի աւելի լրջագոյն կողմը, այնէ Մարդկութեան Ողբերգութիւնը պատմելու գործին։

Նրա երրորդ պէրիոդը, 1601—1608 սկսւում է Եղիսաբէթ թագուհու վերջին օրերի հետ։ Այդ շրջանի առաջին գործն է «Ցուլիոս Կեսար»ը, որով մեծ բանաստեղծը իւր մտերիմ բարեկամի՝ Էսէքսի Դուքսի եղերային վախճանի առթիւ ըզգացած խորին վիշտը արտայայտութեան է բերում։ Դրան հետևում է «Համլէտ»ը, որովհետև այդտեղ բանաստեղծը Դանիմարկի իշխանին պէս զգում էր, որ «ժամանակը քայքայուել էր»։ Երազող Համլէտը կարելի է իսկապէս նմանեցնել Շէյքսպիրին, երբ նա ի տես իւր գժբաղդ բարեկամի պատահած սոսկալի աղէտին՝ սկսում է, խորապէս զգացուած, մտածել և խորհրդածել աշխարհի փոփոխութեանց մասին։ «Օթելլո», «Մակբէթ», «Լիր», «Տրոիլոս» և «Գրէսիտա», «Անտոնիոս և Քլէօպադրա», «Տիմոն»—այս բոլորն էլ գրուել են երրորդ շրջանի առաջի հինգ տարիների ընթացքում։ Մարդկանց ահագին մեղքերը, անողոք ճակատագիրը, որ կամաց-կամաց նրանց շրջապատում է և յանկարծ վրայ է տալիս սխալների և ոճիրների գլխին՝ յերկիր տապալելով փառք, պատիւ և ճոխութիւն ու հպարտութիւն, խղճի վրիժառու կատաղութիւնը, անգթութիւնը և պատժումը տկարութեան, մարդկանց դաւաճանութիւնը, ցանկութիւնը, նախանձը, ապերախտութիւնը և խենթութիւնը, մեծամեծների յետամնացութիւնները և ամբոխի փոփոխամտութիւնը այս ամենը կենդանի և վառ գոյներով հրաշալիօրէն նկարագրուած են այդ չքնաղ հատորների էջերում։

Չորրորդ և վերջին շրջանում 1608-1613 մենք գտնում ենք Շէյքսպիրին արդէն բոլորովին փոխուած. նա հասել է այժմ խաղաղ և անդորը բնաւորութեան և նրա կեանքի երեկոն լիքն է այն ազնիւ, մեղմ ու սիրելի յատկութիւններովը մի մարդու, որ փորձառու է եղել մեղքի, վշտի և ճակատագրի, բայց այդ բոլորի վրայով անցել, սլացել է դէպի խաղաղ յաղթութիւն։ Իւր մեծ ժամանակակից՝ Պէքնի պէս-նա թողել է աշխարհն ու իր չար ժամանակը իրա յետևում և միևնոյն հանգարտ արժանիքով փնտռում է գիւղական կեանքի անմեղութիւնը և խաղաղութիւնը։ Այս շրջանի նրա բոլոր դրամաները գեղջկական կեանքի բուրմունքով տոգորուած են։ Ծաղիկները որ Պէրդիդան «Զմրան Զրոյց»-ում քաղում է, և ոչխարների խուզման խրախճանքները՝ նա տեսած պէտք է լինի Ստրաթֆորտի՝ զուարթ մարգագետիններում։—Ֆեռեշի երգը «Սիմբելինում» բանաստեղծուած է մի մարդուց, որը այլևս չի երկնչում մեծամեծների կնճռոտ դէմքերից, ոչ էլ բամբասանքներից և կամ յախուռն քննադատութիւններից, և որը աչքերն լառած էր արդէն այն ժամանակին, երբ մարդիկ նրա մասին պէտք է ասէին։

«Խաղաղութիւն քո ոսկրներին. և լարգանք քո գերեզմանին»։

Հաւանօրէն Շէյքսպիր թողած պէտք է լինի Լանդօնը 1609 թուականներին և մենք գտնում ենք նրան իւր Ստրաթֆորտում գնած սեփական տան մէջ ապրելիս իւր կնոջ մօտ, որի հետ նա, ինչպէս ասում են, հաշտուել էր յետոյ, դրա համար էլ նրա այդ միջոցին գրած պիէսաները ընտանեկան խաղաղութեան և ներողամտութեան ներշնչումներով են տոգորուած։ «Մարինա»ի պատմութիւնը, որը նա անաւարտ թողել է և որին երկու յետագայ գրողներ ընդարձակելով «Պէրիկլէս» պիէսան են կազմել, նրա ամենավերջին դրամաներից մէկն է և հաւանօրէն նա փակել է իւր բանաստեղծական կեանքի շրջանը 1611 ին, գրելով Ֆլէչերի հետ «Հէնրի VIII» թատերգութիւնը,

Մի քանի տարի նա լռութեան մէջ անցկացրեց և վերջապէս Ապրիլի 23-ին 1616 թ. նա կնքեց իւր երկրաւոր գոյութեան ընթացքը, իւր ծննդեան 52-րդ տարեդարձի օրը։

(Վերջ) Մ. Պ.

Թարգ. Անգլ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

—

Մօտ երեք շաբաթուայ մեծաշխատ և բարեխիղճ նախապատրաստութիւնից յետոյ, Ղալայի թատերասրահում, Արամեան դպրոցի ուսուցչական խումբը, յօգուտ նոյն դպրոցի, Մարտ 3-ի գիշերը խաղաց Շերվանզադէի «Արմենուհի» անունով 4 գործ. դրամայն։

Նկատի ունենալով շաբաթաթերթի սուղ էջերը, առ այժմ զանց ենք առնում պիեսի համառօտ բովանդակութիւնն առաջ բերել։ Անցնում ենք սիրողների խաղին, որոնք, ի պատիւ իրենց, միշտ լուրջ և ուշադրաւ պիեսներ են դընում Արամեան դպրոցի բեմի վրայ և դրաւում մեծ քանակութեամբ և այն էլ ընտիր հասարակութիւն։

Անցնենք խաղին։

Անպայման փայլուն կերպով տարաւ իւր բարդ դերը Արմենուհին (օր. Զ. Թորգոմեանը), և կցանկանայինք յաճախ նա երևալ իրեն համար երկրորդ մայր եղող դպրոցի բեմում, առանց ուշք դարձնելու բամբասասէր մեր քաղաքացոցթարախակալած հոգուց ու սրտից վիժած խօսքերին։

Օր. Զարուհին անպայման շնորհքի տէր է. և արժէ, որ նա զարգացնէ իւր այդ շնորհքը։ Հասարակութեան անվերջ ծափերը, իւր ընկեր սիրողների անդադար լսուող խրախուսականները մեծ ապացոյց էին դէպի օրիորդի դժուարին դերի անկեղծ գնահատումը։

Այդ օրը առանձնապէս աչքի ընկաւ նոյնպէս Արամ. և Ս. Աննայեան դպրոցի նախկին սան օր. Արուսեակ Մել. Ազարեանը (Սիրանոյշ), որ խաղում էր Հմայակի կնոջ դերը։ Ունի գեղեցիկ և կտրուկ արտասանութիւն, չնայած տարիքի փոքրութեան, ըմբռնում է իւր դերը։ Նա ևս կարող է մեր քաղաքի յայտնի սիրողներից լինել, եթէ շարունակի բեմ բարձրանալ։

Հմայակը (Վահան), ունէր դժուար դեր։ Նա իւր ներսը կրում էր տհագին փոթորիկներ և հոգեկան անտանելի յոյզեր։ Պ. Վահանը, որ կարողացաւ տանել իւր դերը, որ առանձնապէս սիրահար էրեմի, կարող էր էլ աւելի լաւ տպաւորութիւն թողնել, եթէ հեռու լինէր չափազանցութիւններից, որ առ հասարակ նկատելի է նորա խաղերում։ Բնականութիւն, ահա դերասանի յաջողութեան ամենամեծ գաղտնիքը։ Եւ պ. Վահանը աւելի բնական էր II արարուածում, քան IV ում, ուր, չըգիտենք ինչու, նա շատ հրամանատարօրէն մտաւ բեմ։

Արմենուհի հօր դերը—Գոստանդին խաղում էր պ. Տատեան։ Ունէր յաջող գրիմ, միայն պակասում էր նրա մէջ տօնի տեմպը պահելու հաւասարակշռութիւնը։ Իսկ իւր ընդհ. խաղը մտածուած էր և բաւարար։ Ստեփան (Վ. Վասիլեան) ամեն ճիգ թափում էր պատուով դուրս գալու իւր դերից։ Նա համահաւասար չի թափանցում իւր դերի ամբողջութեան մէջ. պակասում է նորան բեմի վրայ յարմար կեցուցուածք բռնելու կարողութիւնը։ Նա թէպէտ իւր դերում բաւարար էր, բայց խորհուրդ կտայինք նրան, որ նա առ հասարակ պատասխանատու դերերից, որքան կարելի է. հեռու լինի։

Բարդ գծեր ունէր Սամսոն Ալադեանը (պ. Ա. Տ. Վարդանեանը)։ Նորան շատ օգնում է իւր արտասանութեան և առոգանութեան պարզորոշութիւնը։ Նա ուժեղ էր իւր բացատրութեանց բուռն տեսարաններում, իսկ հարկ եղած չափով ճկունութիւն երևան չբերեց հաշտուողի և ամեն ինչ մոռացութեան տուողի արդէն մեղմացած ամուսնու դերում։ Իւր խաղի ամբողջութեան մէջ բաւարար էր։

Օր. Աստղիկ (Եղիսաբէթ) դաժան և պահպանողական մօր դերում լաւ էր։ Օրիորդը պէտք է ուշադիր լինի իւր գրիմին։ Վիրգինէի դերը (օր. Մարիամ) չգիտենք ինչու տրուած չէր նոյն անսամբլում տիկ. Աղաջանեանին (Մելանիա), իսկ տիկին Աղաջանեանի դերը Վիրգինէին։ Գարեգնի դերը խաղում էր պ. Վաղինակ։

Սիրողների խաղը ընդհ. առմամբ շատ լաւ էր և... հասարակութիւնը, որ վաղուց անհամբեր սպասում էր ներկայացման, ճիշտ ժամանակին եկել էր սրահ։ Նա շատ լարուած հետևում էր խաղին մինչև վերջ և մնաց գոհ սիրողների խաղից։ Ներկայացումը սկսուեց նշանակեալ ժամից 1 ժամ ուշ։ Նուագում էր Հաջի Նուրա Դովլի անձնական երաժշտախումբը։ Կար ճոխ բուֆէտ և վիճակախաղ։ Զուտ մուտք կմնայ երևի 110 թմն.

Սիրող

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Մարտ 10-ին, շաբաթ, Ս. Լուսաւորչի «մեռան ի վիրապ» տօնի առթիւ դասեր չեղան Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցում և Կեդրոնականում։

Մարտ 9-ին երեք ամսեայ բացակայութիւնից յետոյ Ռուսաստանից Թաւրիզ վերադարձաւ վաճառականապետ պ. Զաքարիա Նազարբեգեանը. ամսի 11-ին նա այցելեց Ջօջա-էդ-Դովլին և Թեմիս առաջնորդին։

Արամեան դպրոցի վարչ.-ը Մարտ 3-ի ցերեկը, «Արմենուհի» դրամայի ներկայացման օրը. ծրարեալ մի ափիշ ուղարկած լինելով Ղարադաղի Նահանդապետ և Ատրպատականի զօրքերի հրամանատար Ռաշիդ-օլ-Մօլքին, վերջինս բարեհաճել էր դպրոցին նուէր ղրկել 50 թմն. որ արդէն ստացել է հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ։

Համեմատել այս գեղեցիկ արարքը մերայնոց այն դատապարտելի արարքիհետ, որ յաճախ հոգաբարձութեանց թատրոնական տոմսակները լեռ են ուղարկել առանց ծրարը բաց անելու և վրանէրն էլ անպատուաբեր մակագրութիւններ բարեհաճելով աններ։ Ցեռոյ ասում են, որ մենք «չարչի» ազգ չենք։

Վերջապէս ի պատասխան Արամեան դպրոցի հոգաբարձութեան պահանջ հեռագրի, Ահարի դատաւոր Սարգսյան—Սաթվաթը Սարգսյան Ռաշիդին տուած մի անորոշ և երկդիմի հեռագրով՝ յայտնում է, որ Հաթամ խանը գտնուել է և կբռնուի։ Իսկ Իբրահիմ խանի մասին ոչ մի խօսք։

Ամսիս 9-ից, գեներալ հիւպատոս պ. Ալէքսանդր Եակովլևիչ Միլլերի մեկնելու պատճառով, Խոյից Թաւրիզ հասաւ նախկին I դրագման և վից կոնսուլ պ. Բրիաբրաժինսկին, որ փոխարինելու է պ. Միլլերին։

Ամսիս 11-ին ժամը 4-ին Հաճի Ջօջա-էդ-Դովլէն սովորական հեծելանիրով և շաթիրներով եկել էր հիւպատոսարան մնաս բարևի։

Ամսիս 14-ին, ժամը 10-ին Թաւրիզի բոլոր ռուսահպատակները, հիւպատոս պ. Միլլերի մեկնելու առթիւ, կանչուել էին հիւպատոսարան։ Մնաս բարևի էր գնացել և սրբազան առաջնորդը։

Մարտ 11-ին Վ.ալա Թագի Ս. Աստուածածին եկեղեցում առաջնորդը, պատարագի միջոցին, քարոզեց նախանձի մասին։ Այս անգամ կար աւելի ժողովուրդ։ Նախորդ շաբթում խօսել է ասի մասին։

Մարտ 10-ի համար Արամեան դպրոցը պիտի տար ածանագին մի ներկայացում, Թեմ. ապարանը, գրաշարի հիւանդութեան պատճառով, տիպիշը ուշացրած լինելով լեռաձգեցն երկայացումը։ Այդ օրը Լիլաւում խաղացին «Մարուող ձրագները» և մի այլ վոդեվիլ։

Ամեն օր կատարւում է Թուրք զինուորների մարզութիւն ռուս սպաների ղեկավարութեամբ։ Զինուորները բաւական առաջադիմել են քայլերթում և այլ վարժութեանց մէջ։

Լսում ենք, որ Իւսկիյում կայ խռովութիւն։

Էջմիածնից լուր է ստացուած, որ բոլոր քարվանսարաները լցուած են ռուս զօրքերով։ Էջմիածնի պարիսպների բուրգերի վրայ դրուած են թնդանօթներ։ Իգդիրից սպասւում է ծաղիկ զօրքերի խուժում։ Արդէն երևացել են այդ կողմերում թուրք աւազակներ։ Այստեղ ևս խօսւում է պատերազմի հաւանականութեան մասին։

Յետոյ մեր հոգևոր իշխանութիւնը խօսում ժողովրդի անտարբերութեան մասին։ Կիրակի օրուայ, Մարտ 11-ի համար Ղալայում նշանակում է պատուիրակային ընտրութիւն, իսկ յայտարարութիւնը ցրւում է 10-ի գիշերը։ Ո՞վ իմացաւ, քանի՞ հոգի կարդացին։ Պէտք է մի շաբաթ առաջ ցրել յայտարարութիւնը։ Նշանակուած ընտրութիւնները չկայացան ոչ Ղալայում և ոչ երկրորդ անգամ Լիլաւում։

Տարօրինակ վերաբերմունք։ Մենք ձայն ենք բարձրացնում նոր պատգ. ժողով կանչելու մասին, իսկ առաջնորդարանը կանչում է ժողով՝ հրաժարուածների տեղ նորերին ընտրելու համար, մինչդեռ նոյն առաջնորդարանը իւր վերջին յայտարարութեան թերթում «Առաջնորդարանի կողմից» վերնագրով յայտարարութեան մէջ յայտնում է ցաւագին, որ պատգամաւորների մեծ մասը հրաժարուած է և կամ հեռացած։ Մի՞թէ այդ դէպքում նոր ժողովի հրաւէր չե՞ն անի։ Բայց մեզանում ե՞րբ և ո՞ւր է լսուել մամուլի ձայնը, որ այժմ լսուի. այդ պատճառով էլ բոլոր գործերը մնում են երեսի վրայ, ամեն ինչ ընթանում է վատ և դժգոհութիւն ամենքի բերանում, ամեն տեղ։ Մեր յաւագոյն ցանկութիւնն է, որ սրբազանը առաջ բերի կենդանի գործ, ազատութիւն, պայիտութիւնով չբաւականանայ։ Մենք կդառնանք այս խնդրին։

Պաշտօնապէս խոստովանելուց յետոյ, որ պատգ. ժողովի մեծամասնութիւնը հրաժարուած է, այլ ևս ի՞նչ ասելով կարելի է «հրաժարուածներին» տեղ նորերին ընտրել։ Մի՞թէ պարզ չէ, որ հրամայական է նոր պատգամ. ժողով։

Արամեան դպրոցում, ըստ մանկավարժական ժողովի վճռի (Մարտ 14), Զատկական արձակուրդները սկսւում են Մարտ 19-ից և տևում են մինչև Ապրիլ 2-ը։ Ապրիլ 2-ին սկսւում են պարապմունքները դպրոցում։

Յոգուածների մեծ մասը, նիւթերի շատութեան պատճառով, մնաց յաջորդ համարին։

Թաւրիզի մեր բաժանորդներին ստացականներ չենք տալիս։ Ստացուած բաժինգների մասին կհաղորդենք թերթում։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Մարաղա

Մարտի 7-ին ցեալ Աւագ Մարգարեանի II կինը մի կարգ մարդկանց

ցժով զրկւում է իր ամուսնուց իրեն հասանելիք 1/7 բաժնից, որ անում է շուրջ 500 թմն։ Գործակալ. խորհուրդը պաշտպանում է յանուն օրէնքի այրուն, իսկ մեռածի բարեկամները զրկել են ուզում անպաշտպան կնոջ։ Նախկին հոգաբարձութիւնը նման դէպքում Կարապետ Արիւնից 1/7 մաս առաւ և առեց խորթ մօրը։ Ինչո՞ւ նոյն չափը և նոյն արդարութիւնը չի պահւում ներկայ դէպքում։ Արդարութիւնը այն կլինի, որ վարւեն ըստ օրէնքի։ Մեր հարցին, թէ այդ կնոջը բաժին կհասնի՞, սրբազան առաջնորդը պատասխանել է այո՛։ Կնոջ հաւատարմատարը եկել է Թաւրիզ և խնդրում է առաջնորդի պաշտպանութիւնը՝ ոտնատակ տրուած այրու իրաւունքի պաշտպանութեան համար։

ԱՐՏԱՔԻՆ

Մարտ 1-ի առաւօտեան, երբ Իտալական թագաւորը[1]) կառքով թագուհու հետ դիմում էր Պանթէոն՝ Հումբերտ թագաւորի յիշատակին կատարուելիք հոգեհանգստին ներկայ լինելու համար, մի անյայտ անձ մի քանի անգամ կրակեց թագաւորի վրայ, թագաւորն անվնաս է։ Ոճրագործը ձերբակալուեց։

Տեռորիստը արձանակը կրակել է 3 անգամ։ Թագաւորը և թագուհին պահել են լիակատար հանգստութիւն։ Ամբոխը փորձեց բզիկ-բզիկ անել տեռորիստին, որին ազատեց ոստիկանութիւնը։

Ամեն տեղից ստացւում են տեղեկութիւններ որ ժողովրդի մէջ մեծ ոգեւորութիւն է տիրում թագաւորական զոյգի վտանգից ազատուելու համար։

Ջիօլիտտին ողջունեց թագաւորին Կվիրինալում։ Ֆրանսիական դեսպանը շնորհաւորեց դիպլոմատիական մարմնի կողմից։

Պատգամաւորների պալատում մինիստր-նախագահ Ջիօլիտտին, կաբինետի ներկայութեամբ, հաղորդեց մահափորձի եղելութեան մասին և շեշտեց թագաւորական զոյգի բարձր անձնական յատկութիւնների վրայ։ Պալատը Ջիօլիտտիի ճառը լսեց յոտնկայս, յաճախակի բացականչելով «կեցցէ՛ թագաւորը» և որոշեց in-corpore ներկայանալ Կվիրինալում (արքունիքում) և արտայայտել թագաւորին ազգի հպատակութեան զգացմունքները։ Պապը արտայայտեց խորին վիշտ, ուսանողներ, ժողովուրդ, 50,000-ից աւելի, կատարեցին ուրախական ցոյցերթ։

Մամուլը դատապարտում է մահափորձը։ Թագաւորն ստացել է 1000-աւոր շնորհաւորական հեռագիրներ։ Պատգամաւորներին ընդունելու ժամանակ սօցիալիստները յայտնեցին իրանց ցնծութիւնը թագաւորին՝ վերջինիս ցոյց տուած արիութեան համար։

«Փրէմտենբլատ»-յայտնում է, որ շնորհիւ Կոկովցեւի բարձր ընդունակութեանց՝ Ռուսաստանն այժմ մտել է գեղեցիկ ֆինանսական հիմունք ունեցող պետութիւնների շարքը։ Նա ընդ առաջ է գնում տնտեսական փայլուն ապագայի։ Կոկովցեւը յայտնի է իբրև Ռուսաստանի ամենաընդունակ ու փորձուած ֆինանսիստ և պատկանում է Եւրոպայի նշանաւոր ֆինանսիստների թւին։

Ամբողջ Եւրոպայում, առաւելապէս Անգլիայում, Բրիւսէլում և Ֆրանսիայում տեղի ունին հարիւր հազարաւոր բանուորների հսկայական գործադուլներ։

Պարիզում խօսում են, որ շուտով յայտարարուելու է հանքային բանուորների միջազգային գործադուլ։ Բանակցութիւններ են կատարւում ամբողջ աշխարհի բանուորական միութիւնների հետ։

«Р.С.»-ին հեռագրում են Պարիզից, որ տարաձայնութիւն ծագեց ռուսաց սօցիալ դեմօկրատների միջև, երևի, կկազմակերպուի երկու առանձին կուսակցութիւն։

Բօլգարիայում տեսնում են զինուորական մեծ պատրաստութիւններ։

Իտալական արտաքին գործերի մինիստրը պաշտօնապէս տեղեկացրեց մեծ պետութիւններին, որ պատերազմական գործողութիւնները Միջերկրական ծովում անխուսափելի են։

«Մշակ»

Տրիպօլիից հեռագրում են, որ Իտալացիները յարձակուած գործելով գրաւել են Կասրոսի ամրացրած դիրքը։ Թուրքերը փախել են։ Նրանք կորցրել են խիստ շատ մարդիկ և թնդանօթներ։

«Սուրհանդակ»

Ռուսիա եւ Թուրքիա

Կ. Պօլսի ռուսաց դեսպան Չարիկովի հրաժարականը թուրքաց մայրաքաղաքում բացատրւում է նրանով, որ Ռուսիան վճռել է փոխել իր քաղաքականութիւնը Թիւրքիայի վերաբերմամբ։

Չարիկովի արձակման շուրջը

Պետերբուրգում մեծ տպաւորութիւն է գործել Կ. Պօլսի դեսպան Չարիկովի պաշտօնանկութիւնը, որ անսպասելի էր նոյն իսկ արտաքին գործերի մինիստր Սազոնովի համար։ Չարիկովի սենատոր նշանակուելը բացատրւում է նրանով, որ նրանից նեղացած են, որովհետև հրաժարական տուած դեսպանները սովորաբար Պետական Խորհրդի անդամ են նշանակւում և ոչ սենատոր։ Չարիկովի յաջորդ անուանւում են Հարտվիգ, Գիրս, Նելտով, գեներալ Պոլոնովին և գեն. Պոլիցին։ Չարիկովի արձակման պատճառը համարում են նրա թրքասիրութիւնը. ասում են, որ աւելորդ համակրանք էր տածում դէպի Երիտաս. Թուրքերը և, հակառակ Պետերբուրգից իրան եղած ցուցմունքներին, նա իր գործողութիւնների մէջ անկախ չէր Դարդանէլի խնդրում։ Ոմանք մինչև իսկ մատնանշում են աւստրիական դեսպանի հետ նրա ունեցած ազգակցական կապերը։

Անբարոյական բարքեր

Պոլտաւայում (Ռուսիա) մօտ 20 հոգի գտել են մատնուած կաւատութեան և անչափահասների անբարոյականութեան գիրկը նետելու համար։

«Սուրհանդակ»

Իտալիա եւ Թիւրքիա

Մեծ պետութիւնները ուզում են դարձեալ միջամտել և վերջ տալ Թուրք-իտալական պատերազմին, բայց կռուող կողմերից ոչ մէկը համաձայն չէ դեռ ևս միջամտութեան։ Եթէ Թիւրքիան Տրիպօլիսը յանձնէ Իտալիային, վերջինս խոստանում է պաշտօնապէս միշտ պաշտպանել Թուրքիայ ամբողջութիւնը (այսինքն՝ թոյլ չտալ, որ Բալկանեան փոքրիկ ցեղերը Թուրքիայից բաժանուեն, ինչպէս օրինակ՝ Ալբանիա, Մակեդոնիա և այլն)։

Թէ Թուրք և թէ իտալական մամուլը հակառակ են օտար միջամտութեան և պահանջում են, որ իրենց կառավարութիւնները շարունակեն պատերազմը մինչև վերջ։ Իտալիան համաձայն է Թուրքաց հետ հաշտուել նոյն պայմաններով՝ ինչ պայմաններով որ Աւստրիա-Հունգարիան տիրեց Բօսնիա Հերցեգովինան և հաշտուեց Թուրքաց հետ։

Պատերազմը վերջացնելու ամենապատեհ կերպը այն կլինի՝ որ Իտալիան տիրէ Տրիպօլիսը, որ մինչև հիմա չի կարողացել նաւահանգիստ քաղաքներից աւելի ներսը գնալ և տիրել, իշխել։

Իտալացիք ընկճել են երկու թրքական պատերազմանաւ Բէյրութ նաւահանգստում։ Թմբակոծութեան ժամանակ վիրաւորուել և սպանուել են մօտ 50 հոգի և վնասուել են մի քանի շէնքեր և մաքսատունը։

Արաբիայ Շէյխերը Իսլամի խալիֆա Տաճկաց Սուլթանին օգնելու համար, ընդդէմ Իտալիայ. 250 հազար թուման հանգանակելով՝ ուղարկել են Պօլիս, և Սուլթանի տրամադրութեան տակ են դրել 120 հազար կռուող մարդիկ։ Սուլթանը ընդունել է այդ փողը բայց 120 հազար կռուող զօրքերը չեն կարող նրան օգտակար լինել, որովհետև Սուլթանը նաւեր չունի նրանց Տրիպօլիս փոխադրելու համար, իսկ նրանք էլ Կարմիր ծովը ոտքով չեն կարող անցնել։ Եթէ Թուրքերը ունենային մի Մովսէս, որ Կարմիր ծովը ցամաքեցնէր մինչև այդ 120 հազար հոգու անցնելը, Սուլթանը կարող կլինէր անշուշտ Իտալական Փարաւոնի զօրքերին հէճ ու բնաջինջ անել, գոնէ նրանց մի լաւ դաս տուած կլինէր Տրիպօլսում։

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

[1]) Վիկտոր-Էմանուէլ, թագաժառանգ ժամանակ Մակար Կաթուղիկոսի օրով եկել է այցի Ս. Էջմիածին և Փրկչի Կենաց Փայտից մի մաս՝ յիշատակ է ստացել կաթուղիկոսից։
Ծ. խմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ"
Propr étaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Զատիկուայ առթիւ յատկապէս ստացուել են ամեն տեսակի և ամենաընտիր քաղցրեղէններ, կանֆէտներ, թարմ շօկօլատներ, բոմբոններ և այլն և այլն։

Նաև ամեն շաբաթ ստացւում են Եւրոպական առաջնակարգ ֆաբրիկաներից ամենաճոխ նորութիւններ կալանթերիի և արդ ու զարդի վերաբերեալ։

ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱՐ—պալտոներ, մանտոներ. շալ և բատիստ, կարուած և կիսակար բլուզներ, իւպկաներ, ամեն չափի կորսէտներ կանայք սպիտակեղէններ շապիկներ, ներքնազգեստներ, շրջազգեստներ, գիշերային շապիկներ և այլն։

ՊԱՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ—սէզօնի և կիսասէզօնի պալտոներ 50—120 դրան. կոստիւմներ 70—120 Ղրն. բրդէնկօմ 60 ղրն.-ից, շալվար 14—35 ղրն. ֆանթէզի ժիլէթներ 17—45 ղրն. շապիկների, բօլէրի, մանշէթների և քրավաթների մեծ քօլլէքցիա։

ՏՂԱՆՑ ԿՈՍՏԻՒՄՆԵՐ 4—10 տարեկան 20—35 ղրն.
ԱՂՋԻԿՆԵՐԻ ԶԳԵՍՏՆԵՐ 3—10 տարեկան 25—60 ղրն.

Գլխի սանդրների և սաքբերի, բեղիբրիլների, փօրտմանների և պայուսակների մեծ քօլլէքցիա, խաղեր, խաղալիքներ ամեն տեսակի և ամեն արժէքի. լիքօրի կարնիթուրներ, սեղանիկներ թէյի և պապիրոսի համար ծալովի, փէշէնիի, կանֆէտի և վարէնիի հրաշալի վազեր. երեխաների ծալովի կառքեր և աթոռներ, սեղանի կլիօնկա արշինով և հատով, ամեն յայնքի և կլիօնկա կրծկալ երեխաների. սենեակի և կօրիդօրի համար լինօլէոմ. Յառաջիկայ սէզօնի օյմացու հրաշալի կտորներ և բլուզացու։

Գաւառներից պատուէրներ կընդունի և ամենայն խնամքով կըկատարէ և բանակցութեան համաձայն արժէքներ կտայ։

ՄԱՆՈՒԿ ՄԱԶՄԱՆԵԱՆ ԵՒ Ը

ԿԱԼԲԱՍ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Ալէքսանդրապօլում և Թիֆլիսում յայտնի մեր պատրաստած և մեծ ընդունելութիւն գտած կալբասով. Թաւրիզում (Ղալա թաղում) արդէն բացել ենք գործարան, որտեղից ամեն օր պատրաստում և արտադրւում են միանգամայն թարմ կալբաս, սալդիսօն, սասիսկա, վիչինա եւ այլն։

Ունինք Ռուսաստանում պատրաստուած ամեն տեսակի խմիչքներ չափազանց մատչելի գներով, որպիսիք չէք գտնի ոչ մի մագազինում. Ունինք իսկական կախեթու և այլ տեսակի ընտիր գինիներ, որոնք չեն ծախւում Թաւրիզի գինիների առասպելական թանկ արժէքներով. Թարմ գարեջուր և ամեն տեսակի ռուսական զակուսկեղէններ. Ծախւում են և կրիբիններ, աժան սարդիններ. Եկէք և գնեցէք թարմ, աժան և ընտիր ապրանքներ և դուք մեզ չէք մոռանայ. կալբասի ռուսական ֆունտը 30կ. (33 շահի). մեր գործարանը լուսանըկար Ստեփան Ստեփանեանի նոր խանութներում, Պ. Սիլիօնի տան մօտ, բողոքականների աղօթարանի կողք են. Ունինք շիբբախտի իւղ գրվ. 2գ. 10 շհ. և կօնսերվներ։

Գ Ա Ր Ո Ւ Ն

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Ամեն մրցումից վեր են և չափազանց ճաշակաւոր Գերմանիայից նոր ստացուած մեր գարնանային վերարկուները, տղամարդկանց վիզիտկաները, ֆանտազիայ ժիլէտները, ամառային ժակէտները և երեխաների հագուստները ու գլխարկները։ «Գարուն»-ին գնողները գոհ պիտի մնան։ «Գարուն»-ում աժան գնով կարելի է ձեռք բերել կանացի շալեր և սպիտակեղէններ, դպրոցական աշկերտների հագուստի կտորներ և այլն։

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно.

Завѣд. больницей докторъ
В. К. Геворковъ.

مریضخانه تبریز

این روزها شروع کرده‌ایم به معالجهٔ هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بظهر مانده الی ظهر و مرضای بی‌بضاعت هر کاه از بکلربکی کری ارشته بیاورند مقیم و غیر مقیم مجانی به کمال مواظبت و اهتمام معالجه خواهد شد

مدیر مریضخانه دکتر واهان کورکیانس